որքան մեծ է իր երկիւղն ու կ'ազդուի հասակին տկարութիւնը, որոնք կը մղեն զինքը դէպքերուն դիմաց աչալուրջ հսկել, ինչպէս կը տեսնենք երեք յաջորդ նամակներուն մէջ։

Գերյարգեցելոյ Աբբայ Հօրդ մերոյ, տեառն տեառն Մխիթարայ
Աստուածաբանութեան վարդապետի

... կասկածն և գողն պատերազմին տակաւին տևէ ի յիս, թէպէտև թուլացաւ սակաւ ինչ, զի սկսան զօրք կայսերին քայլել և գալ այս կողմս. ի մայիսի 16 եկն աստ ֆիրդ մարշալ Վալիսն, հրամայօղն հետևակաց զօրաց. ի 23ին չուեցին երկու նաւք զինուորեալք Ճ.ական զինուորօք բաց ի մառինարաց, 30ական թօփ քաշօղ, ոմանք ասեն ի գաշօվայ գնան, ոմանք ի վու փալանգան, և ոմանք յայլուր առ ի չինել զկամուրջ վասն անցման զօրաց և լինիլ պահպան նմա։ Ի 28ին եկն ենաս մեծազօրն մարշալն զինիգէք, որ է խորհրդական պատերազմի, և աստ մնալոց է։ Կայսերն փեսայն փրինչիփէ լուժորինն գալոց է, իւր կահն և սպասաւորք եկեալ են աստ և այլ մարշալ գալոց է, ոմանք ասեն թէ փալֆին ևս գալոց է. և ոմանք ասեն ոչ, այսօր տասն հազարի չափ զօրք հետևակ և հեծեալ ի սէմէլինու և աստի հանդիսապէս անցեալ գնացին ի վայրս վրանաբնակիլ. մինչև ցայժմ թէ աստի թէ գետով թէ ցամաքաւ, և թէ հանդիպական ցամաքաւն թունայի երեսուն հազարի չափ զօրք անցեալ են, բայց թէ ուր կամին գնալ, անյայտ է այժմ, մինչ սպասեն նաև այլոց զօրացն գալ։ Ի գաշօվայ եկեալ տաճկացն վասն, յայտնի գրոյց ոչ գոյ թէ ինչ եղեն։ Զրոյց գոյ թէ ի մաճարստան ապստամբութիւն գոյ, թէպէտ զբազումս կալեալք են։ Ոմանք ասեն թէ ի ձմերանս ռազօցին տղայն ի տաճկաստանէ գաղտ և գծուծ ձևով եկեալ մտեալք ի յունկարիայ, զի զմեծամեծս դրդեսցէ, յորժամ տաճի[կ] զօրքն գան, ինքեանք ևս զգլուխ բարձին ի վերայ կայսերն, այս իմանեցեալ է, վասն այսորիկ որոնեն և ըմբռնեն զայնպիսիսն, և ռազօցին տղայն փախեալ ասեն վերստին ի տաճկաստան։ Աստ վասն նորա գհրաման մի ընթերցան թմբկաւ երկու և երեք տեղ, թէ ով ոք որ գնա կենդանի կալցէ և բերցէ, 40 հազար ֆիօրին շնորհեսցի նմա. նաև ազատ լիցի ի հարկաց ինք և ազգ իւր. իսկ եթէ զգլուխն բերցէ, 20 հազար։ Եւ յայլոց լուաք, թէ գնա թուրքն ուղարկեալ է ի Վիտին կազմել զընտիր զօրս մինչև յիսուն հազար իբրև իւր, երբ գայցեն զօրք տաճկաց, ինքն ևս մտցէ նոյն զօրօքն ի ի մաճարստան։ Եւ ոմանք ասեն, թէ ի պուքրէշ ուլահու քաղաքն կազմեալ է զզօրս։ Հայք որք ի պէլրղատս, ի չորս և հինգ առաջս բաժանեցան, ոմանք վասն ահին փախեան, ոմանք վասն վաճառականութեան աստ և անդ գնացին, ոմանք փէրէքէնտէ անձինք ի թափուռն երթան, մինչև ցայս վայր 26 անձինք ևս մնան։ Ցորմէ հետէ եկեալ եմ, թուի թէ այսքան ևս մնաց....։

Գերյարգութեան քում
Պատրաստական ծառայ
Հայր Միքայէլ Վ. Սեբաստացի

1738*ին. Մայիսի* 31*ին*
14.*երրորդ գիր ի սոյն թուիս*
ի Պէլրղատու

ՁԱ.

Գերյարգեցելոյ Աբբայ Հօրդ մերոյ, տեառն տեառն Մխիթարայ
Աստուածաբանութեան վարդապետի

.... թշնամեաց վնասն և յառաջանալն միշտ երևի, բայց ի սոցանէ ոչ ինչ գործ երևեցաւ մինչև ցարդ օգտակար. ահա զօրքն անցան ի կողմն դմշուվարու, զի այն կողմն օսովայու երկու և երեք տեղ տաճիկքն տիրապետեալ էին, ԼՌ.ի չափ. մինչ սոքա անցին